

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՍԼԵՏԻ» FOLIO ՀՐԱՏԱՐԱՎԿՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԱՏ ԹՈՓՉՅԱԼ

Շեքսպիրի մահից մոտ յոթ ու կես տարի հետո՝ 1623 թ. վերջին լույս տեսած այս անգնահատելի «երկծալ» (folio) մեծադիր ժողովածուն (հղվում է իբրև F կամ F1) հայտնի է նրանով, որ պարունակում է ոչ միայն մի շարք՝ մինչ այդ անտիպ պիեսներ, այլև նախկինում հրատարակվածների ուրիշ խմբագրություններ: Դա բանասերներին համեմատության հնարավորություն է տվել, ինչի շնորհիվ ճշտվել են շեքսպիրյան բնագրերի բազմաթիվ սխալներ: Հատորի կազմողներ Ջոն Յեմինգն ու Յեմրի Կոնդելն իրենց հանգուցյալ ընկերոջ 36 դրամատիկական երկերը¹ բաժանել են երեք խմբի. F-ի վերնագիրն է՝ «Պրն Ուիլյամ Շեքսպիրի կատակերգությունները, պատմությունները² և ողբերգությունները» (*Mr. William Shakespeares Comedies, Histories, & Tragedies*): Այս անմիջապես նշվում է, որ ժողովածուն «Հրատարակված է ըստ ստույգ բնօրինակների» (Published according to the True Originall Copies): Դրա նպատակն է ընթերցողներին հորդորել, որ հրաժարվեն Շեքսպիրի երկերի այն «զանազան գողացված ու կեղծ օրինակներից», որոնց մասին խոսվում է գրքի նախաբան-ուղերձում: Տիտղոսաբերթի ստորին մասում գրված է, որ հատորը տպագրել են Իսահակ Ջագարդն ու Էդուարդ Բլանթը (Printed by Isaac Iaggard, and Ed. Blount. 1623): Վերջինս հրատարակիչ էր, այնպես որ փաստացի տպագրիչն էր Իսահակ Ջագարդը, ում հայրը՝ Ուիլյամը, տպարան ուներ: Հետաքրքիր է, սակայն, որ ժողովածուի վերջին էջում նշված է, թե ովքեր են վճարել գրքի հրատարակության համար. «Տպագրված է Ու. Ջագարդի, Էդ. Բլանթի, Ջ. Սմեթուիքի և Ու. Էսփլիի ծախսով, 1623» (Printed at the Charges of W. Jaggard, Ed. Blount, I. Smithweeke, and W. Aspley, 1623): Այս բոլոր անունները հիշարժան են, քանի որ F-ի հրատարակության շնորհիվ մեկընդմիջտ մտել են պատմության մեջ: Վերջին երկու հրատարակիչները՝ Ջոն Սմեթուիքը և Ուիլյամ Էսփլին, հավանաբար ընդգրկվել են այդ խմբում, որովհետև

¹ F-ից դուրս են մնացել երկու պիես՝ «Պերիկլես» (Pericles), որ պահպանվել է միայն մի գրահեռնական վատ հրատարակությամբ (1609), և «Երկու արյունակից ազնվական» (Two Noble Kinsmen)՝ գրված Ջոն Ֆլեթչերի (1579–1625) հեղինակակցությամբ, հավանաբար 1613–1614 թթ. (Ֆլեթչերի և Շեքսպիրի համագործակցության մասին տես **Stanley Wells**, Shakespeare & Co.: Christopher Marlowe, Thomas Dekker, Ben Jonson, Thomas Middleton, John Fletcher and the Other Players in His Story, Penguin Books, 2007 [first published 2006], էջ 194–223): F-ի երեսուներեց ու նշված երկու պիեսները կազմում են դրամատիկական երկերի «շեքսպիրյան կանոնը» (Shakespearean Canon): Նրան վերագրվում են նաև այլ պիեսներ, բայց ոչ աներկբայորեն:

² Այսինքն՝ պատմական դրամաները:

նրանց էր պատկանում որոշ պիեսների հրատարակության իրավունքը (մասնավորապես «Չամլետ»-ինը՝ Սմեթուիքին): Մեծադիր հատորը վաճառվել է 1 ֆունտով, որ այն ժամանակ զգալի գումար էր (այսօրվա պայմանական հաշվարկով՝ \$300–400): Բայց մոտ 1000 տպաքանակն³ այնքան արագ է սպառվել, որ շուտով հարկ է եղել լույս ընծայել F2-ը (1632)⁴: Մեզ է հասել F-ի մոտ 230 օրինակ⁵:

Գրքում «Չամլետը» հաջորդում է «Մակբեթին» ու նախորդում «Լիր արքային»՝ զբաղեցնելով 152–280 էջերը: Բայց իրականում այն ընդամենը երեսունուկես էջ է: Գրաչարները հատորն էջակալելիս վրիպակներ են թույլ տվել. 156-ին հաջորդում է 257, 278-ից նախ վերադառնում են 259, ապա գնում 280, 281, իսկ հետո կրկին՝ 280:

Ինչպես Q2-ի⁶, այնպես էլ F-ի դեպքում կիրառվել է տպագրության ընթացքում սխալներ ուղղելու, սակայն չուղղված թերթերը նույնպես օգտագործելու պրակտիկան: Չարլթոն Չինմանը համեմատել է F-ի 80 օրինակ ու ողջ հատորում նկատել մոտ 400 տարրնթերցում, մեծ մասը՝ աննշան, իսկ էական ուղղումները՝ հիմնականում սխալ⁷ (բոլոր փոփոխությունները հավանաբար արված են մեկ անբարեխիղճ սրբագրիչի ձեռքով): «Չամլետում» առկա է 37 տարրնթերցում⁸:

Ժողովածուում օգտագործված տառատեսակներն ու շարվածքի ուղղագրական առանձնահատկություններն ուսումնասիրելով՝ Չինմանը եզրակացրել է, թե ամբողջ F-ի վրա աշխատել է հինգ գրաչար⁹: Նրանք պայմանականորեն հայտնի են որպես A, B, C, D ու E: Բայց հետագա պրատումներով¹⁰ փաստարկվել է ևս չորս գրաչարի առկայությունը՝ F, H, I ու G (գրաչար G-ի խնդիրը մնում է վիճելի): «Չամլետի»

³ Ըստ մի հաշվարկի՝ F-ը լույս է տեսել մոտ 1200 օրինակով (տե՛ս **Charlton Hinman**, *The Printing and Proof-Reading of the First-Folio of Shakespeare*, 2 vols., Oxford, 1963, vol. 1, էջ 39), իսկ ըստ մեկ ուրիշի՝ մոտ 750 (տե՛ս «**The First Folio of Shakespeare: The Norton Facsimile**», ed. Charlton Hinman, second edition, New York, 1996 [first published 1968], էջ XXXIII [գրքի երկրորդ հրատարակության համար Պիտեր Բլեյնիի գրած առաջաբանում]):

⁴ F-ի տպագրության հանգամանքների ու վերահրատարակությունների մասին համառոտ տե՛ս *The Oxford Companion to Shakespeare*, ed. **Michael Dobson & Stanley Wells**, reprinted with corrections, Oxford, 2008 (first published 2001), էջ 145–147: Ծավալուն ուսումնասիրություններից հատկապես հայտնի են **Walter W. Greg**, *The Shakespeare First Folio: Its Bibliographical and Textual History*, Oxford, 1955 և **Charlton Hinman**, *The Printing and Proof-Reading: Ավելի նոր աշխատություններից* տե՛ս **Antony J. West**, *The Shakespeare First Folio: The History of the Book*, Oxford, 2001:

⁵ Տե՛ս **Antony J. West**, *Provisional new census of the Shakespeare First Folio*. – *The Library*, 6th series, 17.1 (1995), էջ 60–73:

⁶ «Չամլետի» այս մյուս բնագրի (Quarto 2-ի) մասին մեր հոդվածը տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», «Բանասիրություն», 140.2 (2013), էջ 24–33: Մեզ հասած երեք՝ սկզբնագրային արժեք ունեցող տպագիր տարբերակներից երկուսը (Quarto 2-ն ու խնդրո առարկա F-ը) համարվում են «լավ», իսկ երրորդը (Q1), որն առաջինն է լույս տեսել (1603 թ.)՝ «վատ» (երևի գրահեճական). այն հավանաբար մի դերասանի հիշողությամբ վերականգնված աղճատ բնագիր է:

⁷ Տե՛ս «**The First Folio of Shakespeare**», ed. Charlton Hinman, էջ XX:

⁸ Դրանց ցանկը տե՛ս **Hamlet**, ed. Ann Thompson and Neil Taylor, *The Arden Shakespeare* (Third Series), 2006, էջ 527–529:

⁹ Տե՛ս **Charlton Hinman**, *The Printing and Proof-Reading II*, էջ 511:

¹⁰ Տե՛ս **Trevor Howard-Hill**, *The Composers of Shakespeare's Folio Comedies*. – *Studies in Bibliography* 26 (1973), էջ 62–106 և **Gary Taylor**, *The Shrinking Composer A of the Shakespeare First Folio*. – *Studies in Bibliography* 34 (1981), էջ 96–117:

մեծ մասը, դժբախտաբար, շարել է անփութությամբ և անուշադրությամբ աչքի ընկնող գրաշար B-ն: Աշխատանքին մասնակցել են նաև I-ն ու E-ն (վերջինս էլ բնորոշվում է իբրև Ջագարդի տպարանի ամենամանփորձ գրաշարը¹¹):

B-ի թույլ տված սխալներից են՝ No Faierie talkes («Դիցանուշը չի խոսում»), փոխանակ՝ No fairy takes («Դիցանուշը չի փախցնում». I.1.168¹²), Pons Chanson (անհմաստ բառակապակցություն, որը B-ն շեղ է շարել՝ համարելով երգի վերնագիր), փոխանակ՝ pious chanson («բարեպաշտ երգ». II.2.414), to take Geulles (անհմաստ բառակապակցություն), փոխանակ՝ totall Gules («լրիվ կարմիր». II.2.451), inobled (անհասկանալի բառ, որ ոմանք փորձում են ընկալել որպես «ազնվացված» կամ «անարգված» [ignobled]¹³), Queene, փոխանակ՝ mobled Queene («զլխաշորով թագուհին». II.2.496–498), surge o're («վրայով բխել»), փոխանակ՝ sugar ore («շաքարով պատել». III.1.48–49) և այլն: I-ի սխալներից են՝ wake («արթնանա»), փոխանակ՝ walke («քայլի», «գա». I.2.243), treble (որ ոմանք փորձում են հասկանալ իբրև trebly [«երիցս»]¹⁴), փոխանակ՝ tenable (բառացի՝ «պահելի», «թաքցնելի». I.2.248), eye («աչք»), փոխանակ՝ dye («երանգ», «գույն». I.3.128), bak'd about («շուրջը թրծվեց»), փոխանակ՝ barckt about («կեղևի պես տարածվեց». I.5.71) և այլն: Բացի այդ, B-ի ու I-ի թույլ տված բազմաթիվ կետադրական սխալներ (հաճախ՝ այնպիսի հատվածներում, որոնք Q2-ում ճիշտ են կետադրված) նույնպես հանգեցրել են իմաստային աղճատումների¹⁵:

E-ն, որը, ինչպես ենթադրվում է, սկսնակ էր, շարել է վերջին գործողության մի մեծ հատված (առնվազն՝ 277 ու 278 էջերը. V.1.22–269): Թեպետ նրա անփորձ ձեռքն անճշտություններ է թույլ տվել, բայց նաև ուղղել է Q2-ի մի շարք եական բացթողումներ՝ բառերից մինչև տողեր: Նրա սխալներից են՝ sixeteene («տասնվեց»), փոխանակ՝ Sexten («ժամհար». V.1.155), terrible woer (woer բառ չկա, սակայն եթե փորձենք արտահայտությունը թարգմանել, կստացվի «գարհուրելի վշտացող» անհեթեթությունը), փոխանակ՝ treble woe («եռակի վիշտ». V.1.237) և այլն:

Երեք գրաշարների այսպիսի սխալները, որոնց հետևանքով մախադասությունները հաճախ կորցրել են իրենց իմաստը, իսկ չափածոն՝ ռիթմը, դարձյալ, ինչպես Q2-ի դեպքում, վկայում են, որ բնագիրը շարվել է առնվազն տեղ-տեղ դժվարընթեռնելի ձեռագրից: Տարբեր կարծիքներ կան այն մասին, թե դա ինչ ձեռագիր կարող էր լինել:

¹¹ Տե՛ս **Charlton Hinman**, *The Printing and Proof-Reading II*, էջ 10 և 264 (ողջ շարվածքի մանրամասն քննությունը՝ էջ 208–275, 516–517), հմմտ.՝ **Hamlet**, ed. Harold Jenkins, *The Arden Shakespeare (Second Series)*, 2001 (first published 1982), էջ 53–55, **Hamlet**, ed. George R. Hibbard, *The Oxford Shakespeare*, Oxford, 2008 (first published 1987), էջ 116–119, **Hamlet**, ed. Ann Thompson and Neil Taylor, էջ 482–483 և 526–527:

¹² «Համլետի» տողահամարներն ու հայերեն բոլոր հատվածները բերվում են ըստ պիեսի մեր ամբողջական թարգմանության, որն այժմ տպագրության ընթացքում է:

¹³ Տե՛ս **Hamlet**, ed. Ann Thompson and Neil Taylor, էջ 251:

¹⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 198:

¹⁵ Տե՛ս **John Dover Wilson**, *The Manuscript of Shakespeare's Hamlet and the Problems of its Transmission: An Essay in Critical Bibliography*, 2 vols., Cambridge, 1934, էջ 192–215:

խնդրին կանդիդատները ստորև, իսկ այժմ կարևոր է քննարկել մեկ ուրիշ հանգամանք:

F-ում չենք գտնում Q2-ում առկա մոտ 230 տող. բառեր, արտահայտություններ և փոքր ու մեծ հատվածներ: Բնականաբար հարց է ծագել, թե ով է արել այդ կրճատումները և ինչ նպատակով: F-ը հազիվ թե եղած լինի «Չամլետի» բեմադրված պարզապես համառոտ տարբերակը, քանի որ այդ կրճատումից հետո էլ բնագիրը ներկայացման համար չափից ավելի երկար է (3535 տող), և Q1-ի շնորհիվ մենք գիտենք, թե այնտեղ մոտավորապես ինչ ծավալով է բեմադրվել: Կրճատումները նաև չեն կարող բացատրվել «քաղաքական» պատճառներով (ինչպես «բանտ Դանիայի» ու «թատրոնների պատերազմի» հատվածների դեպքում¹⁶) կամ գրաքննչական նկատառումներով: Մնում է ենթադրել, որ դրանք արվել են երկը բարեփոխելու մտադրությամբ, իսկ թե որքանով է այդ հաջողվել, և ով է եղել համառոտողը, ուրիշ խնդիրներ են: Ձեռքինզը հավանական չի համարում, որ կրճատումներն արած լինի ինքը՝ Շեքսպիրը: Ըստ նրա՝ դա ավելի շուտ «թատերական համառոտում» (theatrical abridgement) է, ուրիշների ձեռքի գործ, որ սկսվել է, սակայն չի ավարտվել, քանի որ F-ն, այնուամենայնիվ, բեմադրելի ծավալ չունի¹⁷: Էդուարդն ու Յիբարդն, ընդհակառակը, գտնում են (և թվում է՝ իրավացիորեն), որ կրճատողը եղել է հենց հեղինակը¹⁸:

F-ից դուրս մնացած հատվածների ուշադիր քննությամբ պարզվում է, որ դրանց բացակայությունից երկը հիմնականում շահել է: Դովեր Ուիլսոնը և նրա հետևողները Էդուարդն ու Յիբարդը¹⁹, ցույց տալու համար, թե որքան վարպետորեն է համառոտողն աշխատել, մեջբերում են հետևյալ հատվածը: Չամլետը մորը հանդիմանում է այսպես (III.4.67–85).

¹⁶ 1603 թ. Անգլիայի գահ բարձրացած Չակոր (Ջեյմս) I-ի կինը՝ Էնն թագուհին, Դանիայի արքայադուստր էր, և նրան թերևս հաճելի չէին լինի իր «բանտ» հայրենիքի վերաբերյալ Չամլետի դատողությունները: «Թատրոնների պատերազմի» հատվածը նույնպես կարող է հանված լինել Էնն Դանիացուն չվիրավորելու համար: 1604 թ. «Մատուռի մանուկներ» թատերախումբը (որը հանված հատվածում կոչվում է «բազեի մանր ճտեր» ու բնութագրվում նաև այլ քամահրական խոսքերով) անցել էր Չակոր I-ի կնոջ՝ Էնն թագուհու (1574–1619) հովանավորության տակ և արդեն կոչվում էր «Նորին մեծության մատուռի մանուկներ» (Children of Her Majesty's Chapel): Չետևաբար հատվածը կարող էր թագուհուն վիրավորել:

¹⁷ Տե՛ս **Hamlet**, ed. Harold Jenkins, էջ 56: Նրանից առաջ Դովեր Ուիլսոնը ենթադրել է (John Dover Wilson, *The Manuscript of Shakespeare's Hamlet*, էջ 22–33), թե համառոտողը եղել է Շեքսպիրի թատերախմբի ավանդապահը, բայց F-ից հանված հատվածների իր քննության ընթացքում այնքան է զարմացել կրճատողի հմտության վրա, որ գրեթե հրաժարվել է այդ ենթադրությունից: Նրա եզրակացությունը հետևյալն է. «Կարճ ասած (եթե դա ինքը՝ Շեքսպիրը չէր)՝ նա պետք է որ հմուտ մեկը (a competent person) եղած լինի» (32):

¹⁸ Տե՛ս **Hamlet, Prince of Denmark**, ed. Philip Edwards, *The New Cambridge Shakespeare*, Cambridge, 2009 (first published 1985, updated edition 2003), էջ 30 և **Hamlet**, ed. George R. Hibbard, 107–108: Դեռևս Գրեգն է գրել, թե որոշ հիմքեր կան կարծելու, որ, բացառությամբ IV.4 տեսարանի մեծ կրճատման (որն ընդգրկում է Չամլետի չորրորդ հայտնի մենախոսությունը), մյուսներն արվել են Շեքսպիրի ձեռքով (տե՛ս **Walter W. Greg**, *The Shakespeare First Folio*, էջ 318):

¹⁹ Տե՛ս **John Dover Wilson**, *The Manuscript of Shakespeare's Hamlet*, էջ 28; **Hamlet, Prince of Denmark**, ed. Philip Edwards, 12–13 և **Hamlet**, ed. George R. Hibbard, էջ 106–107:

Աչքեր ունե՞ք.

Դա չեք կարող սեր անվանել, ձեր տարիքում
Արյան հուրը հնազանդ է, մեղմաբարո,
Դատողության ծառա, բայց կա՞ դատողություն,
Որ սրանից սրան կանցներ²⁰: *Չգացում ունեք,
Թե չէ՝ հույզից կզրկվեք, բայց դա թմրած
Չգացում է, այլապես ձեր խենթությունը
Չէր մեղանչի, խելքն էլ՝ դառնա ցնորքի ստրուկ.
Կպահպաներ նա ընտրության որոշ բաժին՝
Չգալու նման տարբերություն:*^Չ Ի՞նչ սատանա
Աչքակապուկ խաղաց ձեզ հետ ու ձեզ խաբեց:
*Սնձեռք աչքը, անաչք ձեռքը, անձեռք, անաչք
Ականջները և քիթն առանց այդ բոլորի,
Մի զգայարան հիվանդ մասով այդքան մոլոր
Չէին լինի:*^Չ Ամո՞թ, ո՞ւր է քո շիկնանքը,
Ապստամբ դժոխք,
Եթե տիկնոջ ոսկրերում ես դու ընդվզում,
Թող բորբոքում պատանության մաքրությունը
Մոմի պես իր բոցում հալվի...

Շեղ ու երկու կողմից ^Չ-ի մեջ առնված հատվածները գտնում ենք միայն Չ2-ում: Հավանաբար մի խմբագիր դրանք F-ին հիմք ծառայած ձեռագրից հանել է և միանգամայն ճիշտ է վարվել: Համլետի այս մոլեգին պոռթկումն ավելորդ դատողություններ չի հանդուրժում. այն պետք է լինի սրընթաց ու նպատակային, երկարաբանությունից իսպառ զերծ, որպեսզի չնվազի հախուռն դրվագի լարվածությունը: Մինչդեռ հանված հատվածներն էական ոչինչ չեն ավելացնում զայրացած որդու խոսքին, այլ միայն անհարկի երկարացնում են այն: Հատկանշական է, որ կրճատման հետևանքով բանաստեղծական չափը չի տուժել. կիսատ մնացած մասերը միացել են իրար ու կազմել ամբողջական չափատողեր («Որ սրանից սրան կանցներ: Ի՞նչ սատանա» [Would step from this to this? What devil was't] և «Ամո՞թ, ո՞ւր է քո շիկնանքը, ապստամբ դժոխք» [O shame, where is thy blush? Rebellious hell]):

Նույնպիսի հմտությամբ են համառոտվել նաև ուրիշ հատվածներ: Օրինակ՝ I.1-ում, երբ Հորացիոն հայտնում է երկրում տիրող տագնապի ու ռազմական պատրաստության պատճառը (տեղեկություն, որ պիեսի սյուժեի անհրաժեշտ տարր է), այնուհետև Չ2-ում Բեռնարդոն հաստատում է նրա խոսքը: Նա կապ է տեսնում այդ լարված իրավիճակի և Ուրվականի հայտնվելու միջև, իսկ հետո Հորացիոն երկար-բարակ հիշում է իր լսածը Հռոմում Կեսարի սպանությանը նախորդած դժնդակ նշանների մասին (I.2.111–128): Հարկավ, Բեռնարդոյի ու Հորացիոյի արտասանած այդ տողերն անտեղի են մի դրվագում, երբ մենք բեմում գործող անձանց հետ անհանգիստ սպասում ենք Ուրվա-

²⁰ Համլետն այս պահին մորը ցույց է տալիս հոր և հորեղբոր նկարները:

կանի հաջորդ հայտնվելուն: Առավել ևս ավելորդ են, ասենք, V.2-ում գործողության աղետալի հանգուցալուծումից առաջ Օգրիկի ճոռոմ, գովասանական խոսքը Լաերտի մասին, Չամլետի հեզնական պատասխանը, կցկտուր նախադասությունների փոխանակությունը նրանց ու Չորացիոյի միջև, իսկ Օգրիկի գնալուց հետո՝ լրացուցիչ գործող անձը («մի Ազնվական»): Նա գալիս ու ասում է, թե Չամլետի համաձայնությունը հաղորդել են Թագավորին, կրկին նրան հարցնում՝ կհաճի՞ սրամարտել, և հայտնում մոր հորդորը՝ Լաերտին մի սիրալիր խոսք ասել (V.2.107–137, 140–144, 190.1–203):

Նման օրինակները կարելի է շարունակել, բայց բավարարվենք այսքանով: Ով էլ որ եղած լինի համառոտորը, նա աշխատել է իր գործը լավ իմացող վիրաբույժի պես՝ երկն ազատելով ավելորդաբանությունից և դեպքերի ընթացքը դարձնելով ավելի կուռ ու նպատակասլաց: Եվ դժվար է անել ուրիշ հետևություն, քան որ այդ խմբագիրը եղել է հենց ինքը՝ հեղինակը: Տեղին կլինի հիշել F-ի նախաբանում Չեմինգի ու Կոնդելի այն պնդումը, թե իրենք Շեքսպիրի երկերը հրատարակում են «լիակատար ծավալով, ինչպես որ նա դրանք հղացել էր» (absolute in their numbers, as he conceived them): Չինք չունենք նրանց չհավատալու, և մեզ մնում է եզրակացնել, որ F-ում «Չամլետը» տպվել է տողերի լրիվ քանակով, ինչպես որ այդ «լրիվը» պատկերացրել է Շեքսպիրը, իսկ բացակա հատվածները դուրս են մնացել նրա կամքով:

Թերևս առարկություն կարող է հարուցել միայն IV.4-ի խոշոր կրճատումը: Պիեսից հանվել է Ֆորտինբրասի և իր զորքի գալուց հետո Չամլետի զրույցը նորվեգացի սպայի հետ ու նրա վերջին մեծախոսությունը («Ինչպե՞ս են ինձ բոլոր դեպքերն ամբաստանում». IV.4.8.1–66.1): Արդյունքում IV.4-ը դարձել է մի տարօրինակ կարճ տեսարան՝ բաղկացած ընդամենը 8 տողից: Իսկ դրանք չեն հանվել, որովհետև առաջին անգամ բեմ է գալիս Ֆորտինբրասը, և նրա հետ հանդիսականի այդ նախնական ծանոթությունն անհրաժեշտ է (հաջորդ անգամ նա արդեն կգա ողբերգության վերջում՝ տիրանալու Դանիայի գահին):

Ինչ վերաբերում է Չամլետի մեծախոսությանը, ապա, իհարկե, շատերը չեն հաշտվի դրա կորստյան հետ, թեև որոշ մասնագետներ փաստարկներ են բերել՝ փորձելով ապացուցել, թե այդ կրճատումն էլ արդարացված է: Սա Չամլետի «մեծ մեծախոսություններից չէ», գրում է Էդուարդը, և այն ասողը կարծես տեղյակ չլինի, թե ինչ է կատարվել դրանից առաջ: Չամլետի մտքերն ու հույզերը տվյալ պահին չափից ավելի են բարդացել ու խորացել, պնդում է Էդուարդը, որպեսզի տեղին լինի նրա պարզունակ ինքնամեղադրանքը՝ «Չգիտեմ՝ դեռ / Ինչու ասարեմ, որ ասեմ, թե անելիք կա, / Եթե պատճառ, կամք, միջոցներ և ուժ ունեմ / Դա անելու»: Բացի այդ, բանասերի կարծիքով, տեսարանի կրճատման շնորհիվ մենք չենք տեսնում Չամլետի Անգլիա գնալը, և դա նպաստում է իրավիճակի անորոշությանն ու լրացուցիչ ուժ հաղորդում երկին: Նա հիշատակում է Էռնստ Չոնիզմանի ենթադրությունն այն մասին, թե Շեքսպիրը ստեղծագործելիս կարող էր և չսկսել առաջին գործողությունից ու շարունակել մինչև վերջ, այլ գրել առանձին

դրվագներ ու մենախոսություններ և ապա դրանք դասավորել²¹: Միգուցե «Ինչպե՞ս են ինձ բոլոր դեպքերն ամբաստանում»-ը հենց այդպիսի օրինակ է՝ դրված անհամապատասխան տեղում ու հետո հենց Շեքսպիրի ձեռքով հանված²²: Հիբարդը նույնպես գտնում է, թե մենախոսությունն արժանի էր կրճատման. այն, թեկուզև գրված պերճախոս լեզվով, ավելորդ է և ինչ որ մեզ հայտնում է, արդեն գիտեինք: Միակ նորությունն այն է, որ Համլետը դարձել է անիրատես. նա հսկողության տակ է, Անգլիայի ճանապարհին և ամենևին էլ չունի իր ասած միջոցները²³:

Որքան էլ նման փաստարկները ճշմարտության հատիկ են պարունակում, դժվար է դրանք անվերապահորեն ընդունել: Մի կողմից իրոք թվում է, թե Համլետի վերջին մենախոսության պակասից երկի գործողությունը բնավ չի տուժում, բայց մյուս կողմից այն, հարկավ, գրված է շեքսպիրյան ուժով ու պերճախոսությամբ: Եվ երբ մենք «Ինչպե՞ս են ինձ բոլոր դեպքերն ամբաստանում»-ը չենք գտնում F-ում, ավստասանքի զգացում ենք ունենում: Միգուցե այս դեպքում էլ համառոտորը եղել է ինքը՝ հեղինակը, սակայն նրա «վիրաբուժական դանակը» չի գործել նույնքան անվրեպ, որքան այլ հատվածներում:

Բացի թե՛ F-ից և թե՛ Q2-ից բացակա տողերից, այդ երկու բնագրերի միջև կան նաև բազմաթիվ բառային տարբերություններ, և «Համլետը» հրատարակության պատրաստող մասնագետները մշտապես կանգնում են տարընթերցումներից ճիշտն ընտրելու խնդրի առաջ: Դրանց մի մասի պատճառը, անշուշտ, գրաչարներն են, բայց կան նաև խմբագրական փոփոխություններ (թեև առանձին դեպքերում հեշտ չէ որոշել՝ դրանք գրաչարի^o, թե խմբագրի ձեռքի գործ են): Երբեմն առկա է պարզեցման միտում, այսինքն՝ որևէ խրթին բառ փոխարինվել է ավելի հասկանալիով, ինչպես՝ tunes («մեղեդիներ», «երգեր»), փոխանակ Q2-ի laudes-ի («գովերգեր», «հիմներ». IV.7.178, ընդհանին, հետաքրքիր է, որ Q1-ում էլ, ինչպես F-ում, tunes է), Rites («ծեսեր»), փոխանակ Q2-ի՝ բացառիկ կիրառությամբ Crants-ի («պսակ». V.1.223) և այլն: Մի շարք բառեր պարզապես փոխարինվել են իրենց հոմանիշներով, ասենք՝ ground («հող»), փոխանակ՝ earth (I.5.170. այս անգամ Q1-ը համապատասխանում է Q2-ին), Chamber («սենյակ»), փոխանակ՝ closset (II.1.77), burial («թաղում»), փոխանակ՝ funereal (IV.5.212) և այլն: Կամ նորացվել են որոշ հին բառաձևեր. օրինակ՝ while, փոխանակ՝ whiles, since, փոխանակ՝ sithence, has, փոխանակ՝ hath և այլն: Այսինքն՝ եթե F-ին հիմք ծառայած բնագիրը կրճատել ու խմբագրել է ինքը՝ հեղինակը, ուրեմն նրան պետք է վերագրել նաև նման բառային փոփոխությունների հիմնական մասը:

Q2-ի համեմատ F-ի բեմական ցուցումներն ավելի կոնկրետ են, հստակեցված, ու առկա են նաև լրացուցիչ, նկարագրական բեմական ցուցումներ, որոնք չկան Q2-ում: Ասենք՝ «Գալիս է Համլետը՝ գիրք

²¹ Տե՛ս Ernst A. J. Honigmann, *The Stability of Shakespeare's Text*, London, 1965, էջ 36-46:

²² Տե՛ս Hamlet, *Prince of Denmark*, ed. Philip Edwards, էջ 16-17:

²³ Տե՛ս Hamlet, ed. George R. Hibbard, էջ 109:

կարդալով» (II.2.167.1. Q2-ում՝ «Գալիս է Յանլետը»), «Յանլետը գնում է՝ Պոլոնիոսին քարշ տալով» (III.4.219.1. Q2-ում՝ «Գնում է»), Թագավորը բեմադրությունը դիտելու է գալիս իր «ջահակիր Թիկնախմբով» (III.2.88.3–4) և այլն: Բացի այդ, F-ում գտնում ենք նաև տարրեր, որոնք հավանաբար կենդանի դերասանական խաղի արձագանքներ են: Օրինակ՝ կրկնություններ. «Իմ տետրակը, իմ տետրակը» (My Tables, my Tables. I.5.107), «լավ, լավ, լավ» (Well, well, well. III.1.92), «Օշի՛նդր, օշի՛նդր» (Wormwood, Wormwood. III.2.162): Գերտրուդի սենյակը մտնելուց առաջ Յանլետը «ներսից» (within, իրականում՝ դրսից) գոռում է. «Մա՛յր, մա՛յր, մա՛յր» (Mother, mother, mother. III.4.6, այդպես է նաև Q1-ում, բայց բառը կրկնվում է մեկ անգամ), իսկ մեռնելիս նա «Մնացյալը լռություն է» ասելուց հետո հառաչանք է արձակում. O, o, o, o (V.2.363) և այլն:

Երևում է՝ խմբագրման ընթացքում հաշվի է առնվել պիեսի բեմականացման փորձն ու արտացոլվել այս կամ այն դերասանի (բերված օրինակներում՝ հավանաբար Յանլետի առաջին դերակատար Ռիչարդ Բերբիջի) մեկնաբանությունը: Սակայն դրա հետ մեկտեղ բանասերները նշում են, որ F-ի հիմքում հազիվ թե եղած լինի «Յանլետի» պաշտոնական բեմական օրինակը («հուշարարի գիրքը»), որից ուղղակիորեն ողբերգությունը բեմադրվել է: Քանզի բեմական ցուցումներն անբավարար են նույնիսկ F-ում, և շատ տեղերում լրացումների կարիք կա (մինչդեռ «հուշարարի գիրքը» պետք է այս առումով անթերի լիներ): Ջենքինզը, օրինակ, գրում է, թե F-ում ավելացված է Q2-ից բացակա տասից ավելի Exit («Գնում է») ցուցում, սակայն գրեթե նույնքան էլ դեռևս պակասում է²⁴: Ի՞նչ բնագրից է, ուրեմն, շարվել F-ը:

Յեղիմակավոր Ալիս Ուոքերը, որը կարծել է, թե Q2-ի ողջ առաջին գործողությունը շարված է Q1-ի մի ուղղված օրինակից, այս դեպքում էլ գտնում է, որ մի նույնպիսի՝ գրիչով ճշտված Q2-ի օրինակ էլ հիմք է ծառայել «Յանլետ» F-ի տպագրության համար²⁵: Նրա հետ համաձայնում է Ջենքինզը և իր հերթին փորձում այս տեսակետը հաստատող փաստարկներ բերել²⁶: Q2-ի ենթադրյալ օրինակն, ասում է նա, համեմատվել է մի «անկախ ձեռագրի» հետ և ուղղումներով համապատասխանեցվել դրան: Նրա բերած օրինակները, սակայն, համոզիչ չեն թվում: Դրանք, ասենք, ընդհանուր (կամ թվացյալ) սխալներ են. Q2: article desseigne – F: Article designe (I.1.97), փոխանակ՝ article design'd («նշված կետ/հոդված». ուղղումը կատարվել է F2-ում), Q2: a deere murdered – F: the Deere murdered (II.2.578), փոխանակ՝ a deere father murdered («սպանված սիրելի [հայր]». ուղղումը կատարվել է Q3-ում), Q2: Thus didst thou – F: Thus diddest thou (IV.7.58), փոխանակ՝ Thus diest thou («Այսպես արեցիր/ես մեռնում». ուղղումը Q1-ի հիման վրա կատարել է Դովեր Ուիլսոնը) և այլն: Նախ պետք է հաշվի առնել, որ նշված «սխալ-

²⁴ Տե՛ս Hamlet, ed. Harold Jenkins, էջ 56:

²⁵ Տե՛ս Alice Walker, The textual problem of Hamlet: a reconsideration.– Review of English Studies, n.s. 2 (1951), էջ 328–338 և նույնի՝ Textual Problems of the First Folio: Richard III, King Lear, Troilus and Cressida, 2 Henry IV, Hamlet, Othello, Cambridge, 1953, էջ 121–137:

²⁶ Տե՛ս Hamlet, ed. Harold Jenkins, էջ 65–73:

ներն» իրականում կարող են և սխալ չլինել: Գուցե Շեքսպիրը գրել է Article designe («կետի/հողմածի ձևակերպում»), a deere murdered («սպանված սիրելի») և Thus didst thou («Այսպես արեցիր»), երբ Լաերտը պատկերացնում է, թե ինչ է ասելու Յամլետին սպանելիս): Բացի այդ, եթե անգամ գործ ունենք երկու բնագրերում առկա ընդհանուր սխալների հետ, դարձյալ դժվար է դրանց հիման վրա Q2-ի ու F-ի միջև ուղղակի կապ տեսնել, քանի որ կան ուղղագրական ու բառային տարբերություններ: Հիբարդն իրավամբ առարկում է «ուղղված Q2-ի» տեսությանը²⁷: Գրաչարների՝ վերը նշված սխալները տեղ չէին գտնի F-ում, եթե նրանք օգտվեին տպագիր Q2-ից (Sexten, օրինակ, չէր դառնա sixeteene, treble woe չէր դառնա terrible woer, չէին լինի իմաստային բազմաթիվ աղավաղումներ՝ Q2-ի համեմատ կետադրական սխալների պատճառով և այլն):

Գարի Թեյլորն ուշագրավ ուսումնասիրություն է կատարել՝ կետադրության միջոցով ցույց տալով, որ, մասնավորապես, E-ի շարած երկու էջի հիմքում հազիվ թե տպագիր օրինակ լիներ: E-ն շարել է նաև ժողովածուում տեղ գտած այլ պիեսների հատվածներ: Բոլոր այն դեպքերում, երբ նա օգտվել է նախորդ հրատարակություններից, կետադրության մեջ քիչ կան փոփոխություններ: Այսինքն՝ E-ն մեծ մասամբ պահպանել է իր օգտագործած տպագիր օրինակների կետադրությունը: Մինչդեռ «Յամլետի» երկու էջում հակառակ պատկերն ենք տեսնում. դրանց կետադրությունը Q2-ի համեմատ առավելապես փոխված է²⁸:

F-ն, ուրեմն, շարվել է ձեռագրից, ինչն, իհարկե, չի բացառում Ջագարդի տպարանում նաև Q2-ի (կամ Q3-ի, Q4-ի) մի օրինակի առկայությունը: Հնարավոր է, որ այս կամ այն գրաչարը դրա վրա երբեմն աչք գցած լինի, բայց սա չի արվել հետևողականորեն:

Իսկ ի՞նչ ձեռագիր է եղել F-ի կազմողներ Յեմինգի ու Կոնդելի տրամադրության տակ, որ նրանց հիմք է տվել այն կոչելու «ստույգ բնօրինակ», և ո՞վ է այդ ձեռագիրն արտագրել: Էդուարդը հետևյալ ենթադրությունն է անում. «Յամլետ» Q2-ը հրատարակվել է Շեքսպիրի սևագիր թղթերից, որոնք նա իր թատերախմբին էր հանձնել 1601 թ.: Այդ ձեռագրի վրա նա մի շարք հատվածներ նշել էր կրճատման համար, բայց գրաչարները զանց են առել նրա նշումները: Դրա հետևանքով գրքում տեղ են գտել բաներ, որոնք հեղինակը որոշել էր հանել: Թատրոնում սևագիր ձեռագրից մաքրագրություն է արվել, և հաշվի են առնվել հեղինակի նշումները: Ուստի նրա կրճատած հատվածներն այդ օրինակից դուրս են մնացել: Եվ հենց այս ենթադրյալ մաքուր ձեռագիրն է ի վերջո հիմք ծառայել F-ին, սակայն ոչ ուղղակիորեն: 1606 թ. հետո մի անփույթ գրիչ դրանից հերթական ընդօրինակությունն է կատարել՝ արտագրության ընթացքում բնագիրը խմբագրելով, և հենց այս ձեռագիրն է տարիներ անց մտել Ջագարդի տպարան: Ասել է թե՛

²⁷ Տե՛ս Hamlet, ed. George R. Hibbard, էջ 119–122, այդ տեսության քննադատությունը տե՛ս նաև James K. Walton, The Quarto Copy for the First Folio of Shakespeare, Dublin, 1971, էջ 175–183, 208–210:

²⁸ Տե՛ս Gary Taylor, The Folio copy for Hamlet, King Lear, and Othello.– Shakespeare Quarterly 34.1 (1983) 44–61:

Էդուարդը Q2-ի ու F-ի միջև առկա բազմաթիվ տարբերությունները (բացառությամբ նշանակալից կրճատումների) վերագրում է ենթադրյալ երկրորդ արտագրությունն արած անբարեխիղճ գրիչին²⁹:

Թեև Էդուարդի ենթադրությունը կարելի է համարել «Չամլետի» բնագրային հանելուկի հնարավոր բացատրություններից մեկը, դժվար է պատկերացնել թատերախմբի որևէ գրիչի կողմից նման կամայականություն, իսկ Q2-ի տպագրիչի կողմից՝ հեղինակի արած բոլոր կրճատումների անհասկանալի զանցառում՝ հակառակ նրա կամքի: Եվ մի՞թե երկը հիանալիորեն իմացող Չեմինգսն ու Կոնդելը գրիչի ձեռքով այլափոխված բնագիրը կկոչեին «ստույգ», ինչպես որ հեղինակն այն «հղացել էր»: Թերևս՝ ո՛չ:

Ավելի տրամաբանական է թվում այն բացատրությունը, թե F-ին հիմք ծառայած ձեռագրի և՛ ընդօրինակողը, և՛ խմբագիրը եղել է ինքը՝ Շեքսպիրը³⁰: Նրա ժամանակակից թատերական գործարար Ֆիլիպ Չենսլոյի գրառումներից չի երևում, թե որևէ դրամատուրգ վճար ստանալու համար «Լորդ ծովակալի մարդիկ» թատերախմբին իր պիեսը հանձնած լինի սևագիր թղթերով: Միշտ խոսվում է մաքրագիր օրինակի մասին³¹: Չենսլոն, իհարկե, աշխատում էր Շեքսպիրի թատերախմբի մրցակիցների հետ, իսկ «Լորդ սենեկապետի մարդիկ» կարող էին և ուրիշ օրենք կիրառել ու իրենց թատերագրից սևագիր թղթեր ընդունել: Բայց «Չամլետի» «սևագիրը», ինչպես վկայում է սխալաշատ Q2-ը, հավանաբար այնքան խառնափնթոր վիճակում էր, որ Շեքսպիրն այն հանձնելուց կարճ ժամանակ անց, գուցե պիեսի փորձնական (ոչ պաշտոնական) բեմականացումից հետո, որոշել է մաքուր օրինակ պատրաստել: Արտագրելիս, բնականաբար, նա նաև խմբագրական աշխատանք է կատարել՝ հաշվի առնելով բեմի նախնական փորձն ու, հնարավոր է, իր դերասան ընկերների խորհուրդները: Այս ձեռագրից արտագրվել է «հուշարարի գիրքը», լրացուցիչ կրճատումներ են արվել ու բեմական ցուցումներ ավելացվել, և այդ ձևով «Չամլետը» ներկայացվել է հանրությանը: Իսկ Շեքսպիրի հանձնած մաքրագիրը խնամքով պահվել է թատերախմբում և մոտ երկու տասնամյակ անց Չեմինգսն ու Կոնդելին ծառայել իբրև «ստույգ բնօրինակ»: Իսկ Q1-ի ու F-ի ընդհանրությունները և տարբերությունները Q2-ից ցույց են տալիս, որ պիեսը բեմադրվել է հենց այս տարբերակով: Շեքսպիրի ձեռագիրն ըստ երևույթին դժվարընթեռնելի է եղել նույնիսկ մաքրագիր օրինակում, ինչի պատճառով գրաշարները սխալներ են թույլ տվել:

Գրականության մեջ F «Չամլետի» կապակցությամբ հաճախ հիշատակվում է 1606 թվականը, երբ հրապարակվել է օրենք, որով արգելվում էր բեմից «կատակով կամ անարգանքով» (*jestingly or prophanely*) հնչեցնել «Աստծո սուրբ անունը»³²: Այնուհետև մի շարք պիեսներ

²⁹ Տե՛ս **Hamlet, Prince of Denmark**, ed. Philip Edwards, էջ 30:

³⁰ Չմնտ.՝ **Hamlet**, ed. George R. Hibbard, էջ 125–130 և «**The Oxford Companion to Shakespeare**», ed. Michael Dobson & Stanley Wells, էջ 400–401:

³¹ Չմնտ.՝ **Fredson Th. Bowers**, *On Editing Shakespeare and the Elizabethan Dramatists*, Philadelphia, 1955, էջ 15:

³² Տե՛ս **Edmund Kerchever Chambers**, *The Elizabethan Stage*, 4 vols., Oxford, 1923, vol. 4, էջ 338–339:

«մաքրվել» են «Աստված», «Սուրբ Չոգի», «Չիսուս», «Երրորդություն» և այլ սուրբ անուններից: Նման գտում նկատելի է նաև F «Համլետում»։ Q2-ի «Աստվածը» տեղ-տեղ փոխարինվել է «Երկինք» բառով (տե՛ս I.2.150, I.5.24 և այլուր), «պատարագը վկա» (By the masse), «Աստծո արյուն» ('Sbloud), «Աստծո վերքեր» ('Swounds) (տե՛ս II.1.51, II.2.60–61, II.2.570 և այլուր) ու այսպիսի ուրիշ «երդուններ» հանվել կամ խմբագրվել են: Ուստի որոշ մասնագետներ F-ին հիմք ծառայած ձեռագիրը թվագրել են 1606 թ. հետո³³: Սակայն Գարի Թեյլորը ցույց է տվել³⁴, որ «Աստված» բառը F-ում 7 անգամ խմբագրված է, 19 անգամ մնացել է անփոփոխ, իսկ մեկ անգամ (IV.5.198–199) ավելացված է: Ավելին՝ եթե «գտում» իրոք կատարվել է, ապա դա հետևողական է միայն սկզբի մոտ 1000 տողում: Վերջին օրինակը, երբ «Աստված» փոխարինվել է «Երկինք»-ով, II.1.76-ում է, II.2-ից քիչ առաջ, այսինքն՝ խմբագրումը համընկնում է այն հատվածին, որում արվել է գործողությունների ու տեսարանների բաժանում, իսկ ապա դադարեցվել³⁵: Եվ որովհետև պիեսի շարունակությունից հանվել են առանձին «երդուններ», բայց «Աստված» բառը մնացել է իր տեղում, Թեյլորն իրավացիորեն կարծում է, որ դա ոչ թե մաքրման, այլ հեղինակային խմբագրման արգասիք է: Այսինքն՝ F «Համլետում» 1606-ի օրենքի խիստ կիրառում նկատելի չէ, ուստի այդ թվականը չի կարելի համարել ժամանակային ստորին սահման: Երդունների մի մասը հանել է Շեքսպիրն իր սևագիրն ընդօրինակելիս ու խմբագրելիս, իսկ մնացյալ մասնակի «մաքրումն» արել է նա, ով, թերևս F-ի տպագրությունից առաջ, սկսել է և կիսատ թողել ողբերգության բաժանումը գործողությունների ու տեսարանների:

Բայց հարց է ծագում. եթե պիեսի վերջնական հեղինակային խմբագրությունը ենթադրյալ մաքրագիր օրինակն էր, ինչո՞ւ է Q2-ը տպագրվել սևագիր թղթերից: Տրամաբանական պատասխան կարող է լինել, որ այդ խմբագրումը հեղինակն արել է թատրոնի համար, սակայն չի հրաժարվել նաև «սևագիր» առավել ծավալուն տարբերակից՝ այն համարելով ընթերցանության բնագիր: Ահա՛ թե ինչու Q2-ի տիտղոսաթերթին խոսք չկա բեմադրության մասին, այլ միայն շեշտվում է հրատարակության կրկնակի ծավալն ու ամբողջականությունը:

АРАМ ТОПЧЯН – Издание Фолио «Гамлета». – В статье рассматриваются текстологические вопросы, связанные с изданием Фолио (или Фолио 1) «Гамлета» (1623), последней из трёх оригинальных версий трагедии, вышедшей в свет

³³ Օրինակ՝ Hamlet, Prince of Denmark, ed. Philip Edwards, էջ 30.

³⁴ Տե՛ս Gary Taylor, 'Swounds Revisited: Theatrical, Editorial, and Literary Expurgation, in Gary Taylor and John Jowett, Shakespeare Reshaped, 1606–1623, Oxford, 1993, էջ 51–106:

³⁵ F-ում լատիներեն նշված է. «Առաջին գործողություն, առաջին տեսարան» (Actus Primus, Scaena Prima), ապա՝ «Երկրորդ տեսարան» (Scena Secunda), «Երրորդ տեսարան» (Scena Tertia), որից հետո առաջին գործողությունն այլևս չի ընդմիջվում (հետագայում ավելացվել են չորրորդ և հինգերորդ տեսարանները): Այնուհետև՝ «Երկրորդ գործողություն» (Actus Secundus), առանց «առաջին տեսարանի», և վերջապես՝ «Երկրորդ տեսարան» (Scena Secunda), որով բաժանումն ավարտվում է: Մնացած գործողություններն ու տեսարաններն առանձնացվել են՝ սկսած 1676 թ. հրատարակված Q6-ից, և գործընթացն ավարտվել է XVIII դարում:

приблизительно семь с половиной лет спустя после смерти автора (название Folio/F/F1 носит и весь сборник, включающий 36 драматических произведений Шекспира). «Гамлет» F, наряду с Q2 (1604/5), считается «хорошим» изданием (в отличие от очень краткого и искаженного Q1 [1603]): эти две версии дополняют и уточняют друг друга, и трудно представить существование одной без другой. В статье подчёркивается, что различия между Q2 и F, вероятно, являются результатом авторской переработки текста, а не постороннего вмешательства, как считали некоторые шекспироведы.

ARAM TOPCHYAN – *The Folio Edition of Hamlet*. – This article discusses textual issues related to the Folio (Folio 1) edition of *Hamlet* (1623), the last of the three original versions, which was published around seven and a half years after the author's death (the whole collection is also called Folio/F/F1; it contains 36 dramatic works of Shakespeare). *Hamlet* F, together with Q2 (1604/5), is regarded as a «good» edition (unlike Q1 [1603], which is a significantly abridged and corrupt text): these two versions supplement and correct each other, and it is difficult to imagine the existence of one without the other. It is emphasized in the article that the differences between Q2 and F are probably a result of textual revision by the author himself, rather than anyone else, as some Shakespeare scholars have opined.